



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀՈԳԵԳԱՍՏՅԱՆ ՏՈՆԻ ՕՐԸ

Մայիսի 25-ն է, օրը կիրակի: Եկեղեցին տոնում է Հոգեգալուստը:

Գարնան վառ և պայծառ օրերից մեկն է: Հավատացյալների բաղմուքյունը ուխտի է եկել Մայր Աթոռ:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճար՝ պատարագ մատուցելու:

Վեհափառ Հայրապետին սպասարկում են գերաշնորհ Տ. Հայկազուն և Տ. Կոմիտաս սրբազանները, հոգեշնորհ Տ. Եղիշե, Տ. Մեսրոպ և Տ. Վահան վարդապետները, հոգեշնորհ Տ. Հուսիկ արեղան և Տ. Հովհաննես քահանա Մարությանը:

Մայր Տաճարը, տոնականորեն դարդարված, պատրաստ է ընդունելու Ռումինիայի Հուստինիան և Բուլղարիայի Կիրիլ Սրբազան Պատրիարքներին, իրենց շքախմբերով, որոնք ուխտավորաբար գտնվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Մայր Տաճարի զանգերի զվարթագին և տոնական զողանջների տակ, քույր եկեղեցիների երկու Պետերը, եկեղեցական թափորով, առաջնորդվում են Մայր Տաճար, ճաշու Ավետարանի ժամանակ: Մի պահ իջման Ս. Սիդանի առաջ աղոթելուց հետո, Սրբազան Պատրիարքները առաջնորդվում են ձախակողմյան դասում գտնված իրենց աթոռները:

Դաշն և վեհ շարունակվում է պատարագը, որին հետևում են Սրբազան Հյուրերը:

Մայր Տաճարի երկու դասերում տեղ են գրավել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու դործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, ռումինացի և բուլղարացի ծանոթ անձնավորություններ, թղթակիցներ և այլ հյուրեր:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը:

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,

ամէն»:


«Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով»:
(ԳՈՐԾԶ Բ 4)

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ.
Մեր Ս. Եկեղեցին այսօր կտոնէ Ս. Հոգւոյ
գալստյան տոնը:

Գործք Առաքելոցի մեջ կկարդանք շատ
կարեւոր, սակայն հուզիչ պատմություններ այս
հրաշալի դեպքին, որ կատարվեցավ Հիսուսի
հրաշափառ հարությունեն 50 օր հետո:

«Եւ ի կատարել ատուցն Պենտեկոստեից
էին միաբան ի միասին»:

Եւ Հիսուսի այդ համեստ աշակերտներու
հոգիները լուսավորվեցան, մտքերը պայծա-
ռացան, սրտերը ջերմացան և սկսան բարբա-
ռիլ աստվածային ներշնչումով մը, և անոնք
դարձան Ս. Հոգիով լեցուն և տարածեցին Հի-
սուսի Ավետարանը՝ արեւիքէն մինչեւ արեւ-
մուտք, հյուսիսէն հարավ: Անոնք՝ Հիսուսի
առաքյալները, այս սուրբ գործը կատարեցին
ամենայն սրբությամբ՝ տանջվեցան, չարչար-



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԱՓՈՐԸ ԴԵՊԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Հիսուսի առաքյալները ընդմիջտ բաժնե-
լով իրենց Մեծ Վարդապետեն, մնացած էին
որբացած և կսպասեին խոստացված մեծ
հրաշքին, երբ Հիսուսի շունչը, Ս. Հոգին պիտի
գար զիրենք մխրբարելու:

Եւ այդ պատահեցավ Զատիկի 50-րդ օրը,
երբ հավաքված միասին, հոգեպես լեցված
Անոր հիշատակներով, կսպասեին Ս. Հոգւոյ
գալստյանը: Եւ ինչպես Ս. Գիրքը կպատմէ,
«Երեւցան եղբայրացիք լեզուք իրեւ ի
հրոյ, և նստաւ իւրաքանչիւր ի վերայ եղացաւ:
Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով» (Գործք
Բ 3-4):

վեցան, շատերը նահատակվեցան իսկ: Ա-
նոնք իրենց կյանքը գոհեցին, իրենց արյունը
բափեցին «վասն մեծի փառացն Աստուծոյ»,
վասն փառաց Հիսուսի Քրիստոսի և Անոր
հիմնած Ս. Եկեղեցւոյն:

Մեր Եկեղեցին ամրացած է այն սուրբ ա-
վանդության վրա, որ Քրիստոսի առաքյալնե-
րեն Թադեոս և Բարքողիմեոս եկան Հայաս-
տան աշխարհ և իրենց հետ բերին Քրիստոսի
Ավետարանը և լուսավորեցին Հայաստան
աշխարհը նոր ու նշմարիտ հավատով:
Երեւ դար հետո, այսինքն Դ դարի սկզբին,
Գրիգոր Լուսավորիչ եկավ իրեւ նոր առաք-

յալ, իբրև նոր լուսավորիչ և «յետ բազում շարշարանաց» հիմնեց Բրիտանական այս Ս. Արքոդը՝ Ս. Էջմիածինը: Հոգիի գործությամբ Հայաստան աշխարհի մեջ բարձրացավ Քրիստոնեական եկեղեցվո սյուներեն մեկը, որ եղավ հայ ժողովրդի հավատքի կեդրոնը, Դ դարեն մինչև այսօր:

Դ դարեն ի վեր, այս Ս. Տաճարը հաճախ սրբապղծվեցավ և նահատակվեցավ հայ

և հարգալից վերաբերմունքով, բարոյական աջակցությամբ կոզմե մեր սուրբ գործին:

Մենք փառք կուտանք Աստուծո, որ այսպիսի նպաստավոր և բարի պայմաններու մեջ կգտնվինք:

Մեզի համար մեծ երջանկություն է, որ այսօր, այսպիսի մեծ տոնի առիթով, մեզի հյուր են եկած երկու մեծ Պատրիարքները Ռումանիո և Բուլղարիո, հանձինս Նորին



ՀՈՒՍՏԻՆԻԱՆ ԵՎ ԿԻՐԻՆՍ ԲԱՐԱՆՔԱՆ ՊԱՏՐԻԱՐԿՆԵՐԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿ

Բրիտանյա ժողովուրդի հետ միասին: Ս. Էջմիածնի պատմությունը պատմությունն է հայ հավատացյալ ժողովուրդի կրած տառապանքներուն:

Դժվար օրերը անցան, և այսօր Ս. Էջմիածինը ո՛չ միայն կանգուն է ու գործվոր, այլ ծաղկումի և շինության, զարթոնքի շրջան մը կապրի:

Եվ մենք, իբրև սպասավորներ, որ կոչված ենք Աստուծո սուրբ գործին ծառայելու, ուխտած ենք մեր պարտքը կատարել դեպի մեր խիղճը, դեպի մեր ժողովուրդը և դեպի այս հազարամյա Ս. Տաճարը:

Ժամանակները բարի են այսօր և նպաստավոր, և մեր պետական իշխանությունը ահա ոչ միայն որևէ դժվարության կամ արգելքի առջև չի դնում մեզ, այլ ան մեզի նեցուկ է,

Սրբություն Հուստինիանի Իր սրբազան ուղեկիցներով և Նորին Սրբություն Կիրիլի՝ Իր շխալմբով, ինչպես նաև Ռուս եկեղեցվո ներկայացուցիչ արժանապատիվ ֆանաններ:

Ռումեն և Բուլղար Օրթոդոքս եկեղեցիները մեր հարազատ, քույր եկեղեցիներն են, իսկ ռումեն և բուլղար ժողովուրդները՝ մեր հարազատ եղբայրները: Բազում դարերի ի վեր բազմաթիվ հայեր կապրին Ռումանիո և Բուլղարիո մեջ, առանց դժգոհության: Անոնք միշտ իրենց դռները բացած են տարագիր հայ ժողովուրդին առջև: Հայերը այդ երկրներուն մեջ գտած են կյանքի ապանովություն, ազատություն, խաղաղ պայմաններ, ինչպես նաև հառադիմության ամեն տեսակ հնարավորություններ:



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺՆԵՐԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺՆԵՐԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԾԱՂԿՅԱ ԴԱՀԼԻՃՈՒՄ

1890—1895 թվականներում, ինչպես նաև 1920—1923 տարիներում, երբ Թուրքիայի հայերը տեղահան եղան ու նահատակվեցան, եղեռնեն ազատածներեն շատերը, փախըստական և անօգնական, ապաստան և ասպնջականություն գտան ու հաստատվեցան Ռումանիա և Բուլղարիա:

1897 թվականին Թուրքիայեն փախստականներեն մեկն ալ Մեր հայրն էր՝ կոշկակար Աբրահամ Պալեյան: Ան բաղված է Բուխարեստ, ռումանական հողի մեջ և Մեր սրտին մեկ մասը կապված է ռումանական հողի հետ:

Երախտագիտության ամենաջերմ գգացումներով տոգորված, այս բալետին, կխընդրենք Ամենապատիվ Հուստինիան և Կիրիլ Սրբազան Պատրիարքներեն՝ ընդունիլ հայ ժողովուրդի երախտագիտական գգացումներուն հալաստիքը, Բուլղար և Ռումեն Օրբոդոֆս Եկեղեցիներուն և հայրենիքներուն ծաղկման և երջանկության բարեմաղրություններով:

Մենք սրտագինս կաղոթենք ռումեն և բուլղար ժողովուրդներուն կյանքի, խաղաղության և հառաչդիմության համար, կաղոթենք ամբողջ աշխարհի խաղաղության և ժողովուրդներուն եղբայրության համար:

Թող Աստված ֆաշառողություն, երջանկություն և սուրբ գործոց հաջողություն պարգևե երկու սիրելի Պատրիարքներուն, բող միշտ անոնց հովվական գավազանը ծաղկած մնա, ի փառս Ռումեն և Բուլղար Եկեղեցիներուն և ժողովուրդներուն:

Միրելի՛ ժողովուրդ, Ս. Հոգվո գալստյան տոնի առթիվ, անգամ մը ևս ուխտենք հավատարիմ մնալ Քրիստոսի Ս. Ավետարանին, Ս. Հոգվո տված շնորհներուն և մեր հախնչաց սուրբ ավանդություններուն:

«Զօրութիւն Ս. Հոգւոյն և սէր, և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ, ամէն»:

Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետը բարի գալստյան սրտագին խոսքերով դիմեց Ռումինիայի Հուստինիան և Կիրիլ Պատրիարքներին, որոնք պատասխան խոսքի մեջ խորին շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար:

Սրբազան Հուլիսը եկեղեցական թափուրով, երգով և շարականով առաջնորդվում են Վեհարան: Վեհափառ Հայրապետը, Հուստինիան և Կիրիլ Պատրիարքները դեպի Վեհարան իրենց ճանապարհի վրա, վանքի բակում սպասող բաղնիքային կողմից որոտրնդոտ ծաղիկերով, ծաղիկներով և ժպիտներով են դիմավորվում:

Վեհարանի Մաղկյա դահլիճում Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս բարի գալուստ մաղթելով Սրբազան Հուլիսին, նրանց ներկայացնում է պաշտոնական անձնավորությանց, Գերագույն Հոգևոր Խորհրդի, միաբանության, Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, վանքի պաշտոնական և ժողովրդական ներկայացուցիչների հետ:

Կարճ դադարից հետո Վեհարանում տեղավում է ճաշկերույթ՝ ի պատիվ Բուլղարիայի և Ռումինիայի Պատրիարքներին: Ճաշկերույթն անցնում է ջերմ մթնոլորտում:

Ընդունելության ժամանակ ճառեր փոխանակեցին Վեհափառ Հայրապետը, Հուստինիան և Կիրիլ Պատրիարքները, Մոլդավիայի միտրոպոլիտ նորին Սրբազնություն ժուստինը և Պլովդիվի միտրոպոլիտ նորին Սրբազնություն Կլիմենտը:

Երկու ժամ տևող այս շատ հաճելի ընդունելությունը անցավ հայ, ռումեն և բուլղար ժողովուրդների և Եկեղեցիների եկեղեցական-մշակութային դարավոր կապերի և հարաբերությունների է՛լ ամփոփ ամրապնդման, եղբայրացման սրտագին ցանկությամբ:

Ընդունելությունը վերջացավ Հուստինիան Պատրիարքի սեղանի վրա արտասանած դոհացողական աղոթքով:

